ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)
2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.
գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան - ի.գ.թ
գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -
պատասխանատու քարտուղար
Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.
Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.
Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.
Արմեն Հայկյանց - ի.գ.դ.
Դավիթ Ավետիսյան - ի.գ.թ.
Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.
Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.
Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.
Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
էլ. կայք՝
http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:
e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 8 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
24.12.2019
Հանձնված է տպագրության
15.05.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ь Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)

2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.
зам. главного редактора
Карен Геворгян - к.ю.н.
зам. главного редактора
Ашот Петросян -
ответственный секретарь
Геворг Даниелян - д.ю.н.
Арутюн Хачикян - д.ю.н.
Николай Стойко - д.ю.н.
Армен Айкянц - д.ю.н.
Давид Аветисян - к.ю.н.
Артур Вагаршян - д.ю.н.
Сергей Аракелян - д.ю.н.
Ваге Оганнесян - д.ю.н.
Тарон Симонян - к.ю.н.

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Չոբանյան
ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ

«Արժութային ինքնիշխանությունը» հայրենական գրականությունում համեմատաբար նոր հասկացություն է: «Արժութային ինքնիշխանության» հասկացության ներքո մենք նկատի ենք ունենալու պետության՝ դրամ թողարկելու, արժույթի արժեքը սահմանելու և փոփոխելու, իր տարածքում ցանկացած արժույթի օգտագործումը կարգավորելու իրավունքները: Քանի որ արժութային ինքնիշխանության խնդիրների առնչությամբ առհասարակ սակավ են հայրենական հետազոտությունները, այս հոդվածը միտված է արժութային ինքնիշխանությունն ուսումնասիրելու արդի գլոբալիզացման և միջազգային տնտեսական ինտեգրացման պայմաններում:

Պետության՝ արժույթ սահմանելու իրավունքը պատմականորեն եղել է ինքնիշխանության առանձնահատուկ բնորոշիչը[1]: Հետաքրքիր է, որ արժութային ինքնիշխանությունը երբևէ ուղղակիորեն չի ճանաչվել միջազգային հանրության կողմից ո՛չ Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ «ԱՄՀ») համաձայնագրի դրույթներով[2], ո՛չ էլ միջազգային իրավունքի հայտնի այլ գործիքներով[3]: Անդրադառնալով միջազգային դատական նախադեպերին՝ հարկ է հիշատակել Միջազգային արդարադատության մշտական պալատի (PCIJ) 1929 թ. «Ֆրանսիայում թողարկված սերբական տարբեր վարկերի վճարման մասին» (Serbian Loans Case)[4] գործը, որտեղ կայացրած վճռում դատարանը նշել է, որ «իսկապես, համընդհանուր ընդունված սկզբունք է, որ պետությունն իրավունք ունի կարգավորել իր սեփական արժույթը»[5]:

Անվիճելի է այն իրողությունը, որ տնտեսական գլոբալիզացիան և ֆինանսական շուկաների ընդլայնումը զգալիորեն սահմանափակել են պետության իրավասությունները դրամային և ֆինանսական հարցերում[6]: Հետևաբար՝ հեղինակների մի զգալի խումբ եզրակացնում է, որ արժութային ինքնիշխանությունը, որպես այդպիսին, քայքայվել և դարձել է ընդամենը «խոսքի մաս»[7]:

Ժամանակակից արժութային ինքնիշխանությունը: Ժամանակակից արժութային

---

[1] Տե՛ս ***Mundell, R.***, Monetary Unions and the Problem of Sovereignty. The Annals of the American Academy of Political and Social Science,2002, 579, 123-152, էջ 132-33:

[2] Articles of Agreement of the International Monetary Fund, 22 July 1944, 60 Stat. 1401, 2 UNTS 39, as amended effective from 18 Feb. 2011, available at: www.imf.org/external/pubs/ft/aa/index.htm. The IMF Agreement is the constituent treaty of the IMF. Having been adopted on 22 July 1944, at the UN Monetary and Financial Conference held at Bretton Woods, New Hampshire, it entered into force on 27 Dec. 1945.

[3] Տե՛ս ***Burdeau***, L'exercice des Compétences Monétaires par les Etats, 212 Recueil des Cours de l'Académie de Droit International (Recueil des Cours), 1988, 211,էջ 236–237:

[4] Տե՛ս Case Concerning the Payment of Various Serbian Loans Issued in France,*France v. Kingdom of the Serbs*, Croats and Slovenes Judgment, հասանելի է՝ http://www.worldcourts.com/pcij/eng/decisions/1929.07.12_payment1.htm:

[5] Տե՛ս Case Concerning the Payment of Various Serbian Loans Issued in France (France v. Serbia), Judgment of 12 July 1929, PCIJ Rep Series A Nos 20–21, էջ 44:

[6] Պետությունների ինքնիշխան լիազորությունների իրականացման իրավական սահմանափակում են, մասնավորապես, ԱՄՀ կամ տարածաշրջանային մակարդակում արժութային միության (monetary union) անդամակցումից բխող սահմանափակումները:

[7] Տե՛ս օրինակ՝ ***Pistor, Katharina***, From Territorial to Monetary Sovereignty (August 14, 2018). Theoretical Inquiries in Law, Vol. 18, Iss. 2, pp. 491 to 517, July 2017, Columbia Law and Economics Working Paper No. 591, էջ 491:

ինքնիշխանությունը ներառում է պետության համար երեք բացառիկ իրավունքներ[1].

- Դրամ թողարկելու իրավունք, այն է՝ մետաղադրամներ և թղթադրամներ, որոնք իր տարածքում օրինական արժեք են,
- արժույթի արժեքը սահմանելու և փոփոխելու ,
- այդ արժույթի կամ իր տարածքում ցանկացած այլ արժույթի օգտագործումը կարգավորելու:

Պետությունն իրավունք ունի **արժույթ թողարկել** իր տարածքում: Այն կարող է դելեգացվել կենտրոնական բանկին կամ այլ մարմինների (արժույթի խորհուրդ), մի քանի պետություններ կարող են դելեգացնել արժույթ թողարկելու իրենց լիազորությունները մեկ ընդհանուր կենտրոնական բանկի (օրինակ՝ Արևմտյան Աֆրիկայի պետությունների կենտրոնական բանկը, Եվրոպական կենտրոնական բանկը և այլն): Իր ազգային արժույթը թողարկելու պետության իրավունքը պաշտպանված է օտար պետություններից: Միջազգային սովորութային իրավունքի և 1929 թ. ապրիլի 20-ի Ժնևի Արժույթի զեղծարարության արգելման կոնվենցիայի համաձայն՝ օտար պետությունն իրավունք չունի կեղծելու այլ պետության տարադրամը:

Պետությունը, որը արժույթ է թողարկում, կարող է որոշել և փոփոխել այդ արժույթի արժեքը (**արժույթի գնահատում**): Իհարկե, այս իրավունքը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով: ԱՄՀ շրջանակներում արժույթի անվանական արժեքը կարող է միակողմանիորեն փոփոխվել անդամ պետության կողմից[2]: Սակայն փոփոխության համար անհրաժեշտ է ԱՄՀ համաձայնությունը. եթե այն մերժվում է, և անվանական արժեքն այնուամենայնիվ փոխվում է (Ֆրանսիա, 1948թ.), անդամ պետությունն այլևս իրավունք չի ունենում օգտվել Հիմնադրամի ռեսուրսներից: Հարկ է նշել, որ նշված փոփոխությունը չէր համարվում ԱՄՀ հոդվածներով սահմանված պարտավորության խախտում: Փաստորեն, պետության արժութային ինքնիշխանությունը ճանաչված է անգամ այս համատեքստում:

Քանի որ արժույթի արժեքի փոփոխությունը միջազգային իրավունքի խախտում չէ, պետությունը պատասխանատվություն չի կրում իր արժույթն ունեցողների առաջ՝ այդ փոփոխության հետևանքների համար[3]: Կարող է բացառություն լինել այս կանոնից, եթե պետությունը «հետապնդում է օտարերկրացիներին վնաս պատճառելու կամ խտրական վերաբերմունք ցուցաբերելու նպատակ»[4]:

ԱՄՀ համաձայագրի գործող դրույթների համաձայն՝ անդամ պետությունների իրավունքների վրա իրենց արժույթի արժեքը սահմանելու կամ փոփոխելու հետ կապված կան որոշակի սահմանափակումներ.

- անդամ պետությունը չի կարող որոշել իր արժույթի արժեքը ոսկու համեմատ. մինչդեռ ցանկացած այլ գնահատում թույլատրելի է[5],
- անդամ պետությունը չի կարող շահարկել փոխարժեքները, որպեսզի կանխի վճարումների հավասարակշռման արդյունավետ հարմարեցումը, կամ ձեռք բերել անարդար մրցակցային առավելություն այլ անդամ պետությունների նկատմամբ[6],
- անդամ պետությունը չի կարող ներգրավվել արժութային բազմակի գործառնությունների մեջ (multiple currency practices)[7]:

---

[1] Տե՛ս *F.A. Mann*, The Legal Aspect of Money, 5th edition, Oxford, 1992, էջ 460-78:
[2] Տե՛ս *Francois Gianviti*, Current Legal Aspects of Monetary Sovereignty, General Counsel, IMF, 2004, էջ 4:
[3] Տե՛ս նաև՝ U.S. Foreign Claims Settlement Commission, Zuk Claim, November 5, 1996, International Law Reports 1958 II vol. 26, էջ284:
[4] Տե՛ս նույն տեղը, էջ285:
[5] Տե՛ս ԱՄՀ համաձայնագրի հոդվածներ, Հոդված IV, մաս 2(b):
[6] Տե՛ս նույն տեղը, Հոդված IV, մաս 1(iii):
[7] Տե՛ս նույն տեղը, Հոդված VIII, մաս 3:

Պետությունը կարող է **կարգավորել իր արժույթի** և այլ արժույթների օգտագործումն իր տարածքում, կարգավորել վճարումները, ներդնել փոխարկման հսկողություն, արգելել վճարումների ընդունում և փոխանցել արտարժույթ ներքին կամ միջազգային գործարքների ժամանակ և այլն: Այն կարող է սահմանափակել օրինական վճարամիջոցի շրջանակը, օրինակ՝ պահանջելով, որ որոշակի չափից ավել վճարումները իրականացվեն չեքերի կամ փոխանցումների միջոցով (հարկերի խուսափումը կանխելու համար):

Միևնույն ժամանակ, մի պետության սահմանած փոխարկման սահմանափակումներն ունեն ռեֆլեկտիվ ազդեցություն միջսահմանային գործարքների և այդպիսով՝ այլ պետության շահերի վրա: Հետևաբար՝ տարբեր միջազգային պայմանագրեր սահմանափակում են միջազգային վճարումները և փոխանցումները սահմանափակելու՝ կողմերի իրավունքները (Եվրոպական միություն, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD), Առևտրի համաշխարհային կազմակերպություն):

Արժութային ինքնիշխանության զարգացումը: Ներկայումս արժութային ինքնիշխանության ոլորտի տարբեր լիազորություններ ենթարկվում են իրավական և տնտեսական որոշակի սահմանափակումների:

Սովորութային միջազգային իրավունքից[1] և միջազգային պայմանագրերից (հատկապես՝ ԱՄՀ համաձայնագիրը իր IV և VIII հոդվածներով) բխող արժութային ինքնիշխանության իրացման սահմանափակումներն աննշան են թվում տնտեսական գլոբալիզացիայի և ֆինանսական շուկաների ինտեգրացիոն գործընթացներից բխող փաստացի տնտեսական սահմանափակումների համեմատությամբ[2]: Պետությունները, որոնք տարածաշրջանային մակարդակում միանում են արժութային միությանը, այդպիսով համաձայնում են արժույթի տիրույթում իրենց կողմից սուվերեն մի շարք լիազորությունների իրականացման սահմանափակումների: Այս լիազորությունների մի մասը, երբեմն անգամ ամբողջ ծավալով, փոխանցվում է միության մարմիններին:

ԱՄՀ համաձայնագրի VI (3) հոդվածը ԱՄՀ անդամներին հնարավորություն է տալիս ամբողջական վերահսկողություն իրականացնելու փոխարժեքի նկատմամբ այնքանով, որքանով դա չի հակասում ԱՄՀ սահմանած սկզբունքներին[3]: Պետության փաստացի հսկողության կորուստն ավելի տպավորիչ է արժույթի ստեղծման համատեքստում: Թղթադրամները և մետաղադրամները, այսինքն՝ շրջանառության մեջ գտնվող արժույթը, զարգացած երկրներում զբաղեցնում են են ոչ ավելի, քան դրամի քանակի մոտավորապես 10 տոկոսը[4], իսկ տարբեր տեսակի արագ զարգացող նորարարական գործիքներ (օրինակ՝ կրեդիտային դերիվատիվներ) գնալով էլ ավելի կարևոր դեր են խաղում տնտեսական գլոբալիզացման սկզբից՝ 1960-ականներից, սկսած:

Ավելին՝ վերջին տասը տարիների ընթացքում զարգացում է ապրել կրիպտոարժույթների տեխնոլոգիան, ինչն ինքնին ևս մեկ մարտահրավեր է պետությունների արժութային ինքնիշխանությանը[5]: Ըստ էության, կրիպտոարժույթներն այլընտրանք են ավանդական արժույթին. պետություններն այլևս կրիպտոարժույթների թողարկողներ չեն: Պետություններն ու ֆինանսական կազմակերպությունները վերահսկողություն չեն իրականացնում կրիպտոարժույթների նկատմամբ: Ապա-

---

[1] Տե՛ս ***C. Proctor***, Mann on the Legal Aspect of Money, 2005, էջ 500–520:

[2] Տե՛ս ***R.M. Lastra***, նույնաշխատանքը, էջ 16–17:

[3] Տե՛ս ԱՄՀ համաձայնագրի հոդվածներ, հոդված XVIII, հասանելի է՝ https://www.imf.org/external/pubs/ft/aa/index.htm

[4] Տե՛ս www.banque-france.fr/fr/statistiques/ monnaie/monnaie.htm:

[5] Տե՛ս ***Ryan L. Frebowitz***, Cryptocurrency and State Sovereignty, Naval Postgraduate School, June 2018, էջ 90:

կենտրոնացված լինելու հանգամանքը և վերահսկողության բացակայությունը նպաստում են կրիպտոարժույթների միջոցով հանցագործությունների իրականացման հավանականության բարձրացմանը[1]: Պետությունների մեծ մասը դեռևս չեն մշակել կարգավորումներ, որոնցով հնարավոր կլիներ նվազեցնել կրիպտոարժույթների օգտագործումից բխող ռիսկերը:

Զարմանալի չէ, որ նման պայմաններում հեղինակներից շատերը, վերլուծելով պետության ինքնիշխան լիազորությունների շրջանակը, հանգում են այն եզրակացությանը, որ արժութային ինքնիշխանությունը քայքայվել է:

Արժութային միության անդամակցություն: Արժութային միությանն անդամակցող պետությունը, ինչպես հատկապես ԵՄ տնտեսական և արժութային միությունում (EMU) (այսուհետ՝ «Միություն»), արժույթի տիրույթում իրենց ինքնիշխան լիազորությունների մեծ մասը փոխանցում են վերազգային կազմակերպություններին: Իրենց անդամակցության տևականությունն ու կայունությունն ապահովելու համար արժութային միության մասնակիցները հատկապես հրաժարվում են իրենց՝ դրամ ստեղծելու, ինչպես նաև ազգային արժութային քաղաքականություն իրականացնելու համապատասխան իրավունքներից[2]: Սակայն պետք է նշել, որ միայն այն փաստը, որ պետությունները տարբեր կառույցների շրջանակներում իրենց ինքնիշխան լիազորությունները որոշակի առումով ենթարկել են սահմանափակումների, չի նշանակում, որ շահագրգիռ պետությունները, որպես այդպիսին, հրաժարվել են իրենց արժութային ինքնիշխանությունից:

Տարածված է այն մոտեցումը (կարծիքներ հաճախ հնչում են Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության անդամակցության համատեքստում), որ տնտեսական միության և առավել ևս արժութային միության անդամակցությունն ինքնին ենթադրում է միասնական արժույթ ունենալու նախապայմանը: Իհարկե, **արժութային միությունը կարող է ունենալ միասնական արժույթ, սակայն սա պարտադիր պայման չէ**[3]**:** Եվրոպական արժութային միությունը սրա վառ օրինակն է, քանզի ի սկզբանե առկա չէր միասնական արժույթ, և ներկայիս միության գործընթացը միայն դանդաղորեն կերտեց միասնական արժույթը[4]: Միասնական արժույթի ձևավորումը, հավանաբար, միությանը վերաբերող ամենահակասական և հանրայնորեն վիճարկված հարցերից էր:

Տարածված է նաև այն ընկալումը, որ տնտեսական միությունը՝ որպես երկու կամ ավելի երկրների տնտեսական առանցքային քաղաքականությունների միավորում, ենթադրում է նաև արժութային միության առկայություն: Բնականաբար, **տնտեսական միությունը կարող է ներառել նաև արժութային միություն, ինչը, սակայն, պարտադիր պայման չէ**: Տնտեսական միությունը միտված է ապահովելու հարկաբյուջետային և դրամավարկային ներդաշնակեցված քաղաքականություն այնպես, որ պետական բյուջեի ավելցուկների և դեֆիցիտների չափերը դուրս չգան որոշակի սահմաններից:

Հաշվի առնելով, որ արժութային միության անդամները անդամակցությունից ի վեր փաստացի չեն կարող վերահսկել միության կողմից նշանակալի մի շարք լիազորությունների իրականացումը, լիազորությունների այսպիսի շնորհումը շատ հեղինակներ դիտարկում են լիազորությունների փոխանցում վերպետական կառույ-

---

[1] Տե՛ս ***Durrant, Sarah***,Understanding the Nexus between Cryptocurrencies and Transnational Crime Operations, CUNY Academic Works, 2018, էջ19:

[2] Տե՛ս ***C. Goodhart***, The Central Bank and the Financial System, 1995, էջ 164–65:

[3] Տե՛ս ***George M Von Furstenberg***, One region, one money, 2002, 756 Annals of the American Academy of Political and Social Science, էջ 108:

[4] Եվրոպական արժութային միավորման (European Currency Unit) և Փոխարժեքի մեխանիզմի (Exchange Rate Mechanism) ձևավորումից հետո միայն տասնմեկ պետություններ ընդունեցին եվրոն որպես ազգային արժույթ 1999 թ. հունվարի 1-ից:

ցին՝ դելեգացման փոխարեն[1]: Այս պնդումը հաճախ արվում է՝ անկախ այն հանգամանքից, որ միության մասնակից պետությունները պահպանում են արժութային միությունից դուրս գալու ձևական իրավունք: Ինչպես նշել է Սարուշին, սուվերեն լիազորության շնորհումը, որը ձևականորեն հետկանչելի է, կարող է, այնուամենայնիվ, համարվել որպես փոխանցում, եթե շնորհող պետությունը չունի ուղղակի հսկողություն վերահսկող կազմակերպությունների կողմից այդ լիազորությունների իրականացման նկատմամբ, և եթե կազմակերպությունն ունի այն իրականացնելու բացառիկ իրավունքը[2]:

Վիճելի է այն հարցը, թե արդյոք միությունից դուրս գալու իրավունք շնորհող հստակ պայմանագրի բացակայության դեպքում վերպետական կազմակերպության ադամ պետությունն այնուամենայնիվ կարող է դուրս գալ կազմակերպությունից՝ այդպիսով հետ կանչելով նաև կազմակերպությանը շնորհված բոլոր լիազորությունները: Օրինակ՝ Եվրոպական միության մասին պայմանագիրը (Մաաստրիխտի պայմանագիր (Treaty on European Union)) լիազորում է անդամ պետությանը միակողմանիորեն դուրս գալ միությունից: Երեք կարճ ամփոփումներով կարելի է անդրադառնալ այս խնդրին:

Նախ, տնտեսական և արժութային միության անդամակցության համաձայնագիրը չի կարող հանգեցնել պետության ինքնիշխանության զիջման, անգամ եթե համապատասխան պայմանագրի շրջանակներում նախատեսված է «առանց վերադարձի ուղևորություն» ինչպես ԵՄ տնտեսական և արժութային միության (EMU) դեպքում[3]:

Երկրորդ, ցանկացած անդամ պետություն, ըստ էության, կարող է միշտ որոշել հեռանալ արժութային միությունից, եթե այն կարողանա ենթադրել արժութային միությունից դուրս գալու տնտեսական հետևանքները և պատրաստ լինի այդ հետևանքներին: Օրինակ, եթե Հունաստանը 2014թ.-ին որոշեր մերժել եվրոն և վերստին վերադառնար դրախմին (հունական դրամ)՝ ենթադրելով այդ որոշման տնտեսական և քաղաքական արժեքը, Եվրամիության կամ Հունաստանի եվրոգոտու անդամ երկրները քիչ բան կարող էին անել եվրոգոտու նման սահմանափակման վերաբերյալ: Իսկ 1971թ.-ին ԱՄՆ-ն միակողմանի որոշում կայացրեց դադարեցնել ԱՄՆ դոլարի՝ ոսկու փոխարկելիությունը. այդպիսով՝ ԱՄՆ դոլարն այլևս դադարեց ապահովված լինել ոսկով, միևնույն ժամանակ մնալով որպես համաշխարհային ռեզերվային արժույթ: Սա միանշանակ արժութային ինքնիշխանության իրացման օրինակելի օրինակ է, չնայած, որ ԱՄՆ-ի այս վարքագիծը հակասում էր արժութային տիրույթում վավերացրած մի շարք պայմանագրերի[4]:

Երրորդ, Գերմանիայի սահմանադրական դատարանի հայտնի որոշումը՝ *Bundesverfassungsgericht (Maastricht- գործով)*[5], օգտագործելով՝ կարելի է պնդել հետևյալը. արժութային միության յուրաքանչյուր անդամ պետություն իր իրավասությունում որպես «պայմանագրի հեղինակներ» կարող է de facto վերականգնել միությանը շնորհած իր լիազորությունները՝ ուղղակի լքելով միությունը: Ավելին՝ յուրաքանչյուր անդամ պետություն ունի անկապտելի իրավունք՝ հիմնված իր՝ որպես ինքնիշխան պետության իրավասության վրա, միակողմանիորեն դուրս գալու

---

[1] Տե՛ս ***Claus D. Zimmermann***, The Concept of Monetary Sovereignty Revisited, *European Journal of International Law*, Volume 24, Issue 3, August 2013, Pages 797–818, էջ. 815:

[2] Տե՛ս ***Sarooshi***, The Essentially Contested Nature of the Concept of Sovereignty: Implications for the Exercise by International Organizations of Delegated Powers of Government, 25 Michigan J Int'l L, 2004, էջ 28–32, 66–69:

[3] Տե՛ս ***Lastra***, նշվ. աշխ., էջ 242:

[4] Տե՛ս ***Treves***, Monetary Sovereignty Today, in M. Giovanoli (ed.), International Monetary Law: Issues for the New Millennium, 2000,էջ116:

[5] Տե՛ս ***Sarooshi***, էջ 66–69:

միությունից: Այսպիսի միակողմանի գործողությամբ անդամ պետությունը հետ է կանչում բոլոր շնորհված ինքնիշխան լիազորությունները:

Արժույթի տիրույթում պետության իրավասությունների լայն փոխանցումն արժութային միությանը ենթադրում է, որ շահագրգիռ պետությունն առնվազն ժամանակավորապես հրաժարվում է այդ իրավասությունների անկախ իրականացումից: Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ լիազորությունների նմանատիպ փոխանցմանը համաձայնելը շատ դեպքերում հետապնդում է ժամանակակից տնտեսական սահմանափակումների ներքո պետության՝ բնակչության համար առավելագույն արժութային և ֆինանսական կայունություն ապահովելու նպատակ: Այս պնդումն ինքնին թույլ է տալիս սուվերեն լիազորությունների հիմքում ընկած փոփոխությունները դիտարկել ոչ թե որպես անժութային ինքնիշխանության զիջում, այլ ժամանակակից տնտեսական սահմանափակումների ներքո ինքնիշխանության արդյունավետ իրականացում: Հետևաբար՝ ինքնիշխանության նման փոխանցումը շատ հեղինակներ համարում են կոոպերատիվ ինքնիշխանության հատուկ ձևով սեփական ինքնիշխանությունն արդյունավետորեն իրացնելու միջոց[1]: Ակնհայտ է, որ եթե երկիրը որոշում է պաշտոնապես դոլլարիզացնել (dollarize) իր տնտեսությունը, նա անում է դա ֆինանսական ավելի մեծ կարգապահության և այդպիսով ավելի մեծ մակրոտնտեսական կայունության նպատակով: Այդ պետությունը ցանկանում է ապահովել գնաճի ավելի ցածր մակարդակ և այդպիսով նվազեցնել իրական փոխարժեքի անկայունությունը: Այս բոլոր նպատակները վերջին հաշվով ծառայում են արժութային և ֆինանսական կայունություն ապահովելուն, ինչն էլ ժամանակակից ինքնիշխանության հայեցակարգի անկյունաքարային նպատակներից մեկն է:

Այսպիսով, հանգում ենք հետևյալին.

- Թեև տնտեսական և իրավական տարբեր սահմանափակումների աճող ազդեցության պատճառով արժութային ինքնիշխանությանից բխող որոշ իրավասություններ վերացել են, սակայն արժութային ինքնիշխանությունը չի քայքայվել: Պետությունները պահպանում են արժույթ թողարկելու, ինչպես նաև դրա արժեքը որոշելու իրենց ինքնիշխան իրավունքը: Սակայն, արժույթի արժեքի սահմանումը ենթակա է մի շարք սահմանափակումների, որոնք ներկայացվեցին սույն հոդվածում: Պետությունն է սահմանում իր տարածքում արժույթի օգտագործման շրջանակները:
- Ժամանակակից ֆինանսական գործիքները, ինչպես նաև վերջին տասնամյակում կրիպտոարժույթների զարգացումը լուրջ մարտահրավեր են նետում պետությունների արժութային ինքնիշխանությանը:
- Չնայած այն թյուրըմբռնմանը, որ տնտեսական միությունը ենթադրում է նաև արժութային միության առկայություն, իսկ արժութային միությունն իր հերթին ենթադրում է միասնական արժույթ ունենալու գաղափար, սակայն մենք պնդում ենք ճիշտ հակառակը. տնտեսական միությունն ինքնին չի ենթադրում արժութային միություն, իսկ արժութային միությունում միասնական արժույթ ունենալը պարտադիր պայման չէ:

[1]Տե՛ս *Martucci*, De l'Union Economique et Monétaire à l'Ordre de la Politique Economique et Monétaire, 21 European Rev Public L, 2009, էջ 1060:

ВАЛЮТНЫЙ СУВЕРЕНИТЕТ

Григор Чобанян
Аспирант кафедры европейского и международного права ЕГУ

Статья посвящена современным проблемам валютного суверенитета в рамках публичного международного права. В частности, в статье рассматривается историческая эволюция концепции валютного суверенитета. Далее статья представляет основные элементы современного валютного суверенитета. В статье рассматриваются вопросы денежного суверенитета в свете современных экономических и правовых ограничений. Автор попытался показать, что валютный суверенитет по-прежнему является одной из важных черт современного суверенного государства, между тем, концепция нуждается в постоянных изменениях, чтобы обеспечить экономическую стабильность для стран.

MONETARY SOVEREIGNTY

Grigor Chobanyan
PhD Student at the YSU CHair of European and International Law

The article is devoted to the contemporary issues of monetary sovereignty in the frameworks of public international law. Particularly, the article addresses the historical evolution of the concept of monetary sovereignty, then it represents the main elements of the contemporary monetary sovereignty. The article discusses the issues of monetary sovereignty in the light of contemporary economic and legal restrictions. The author tried to show that monetary sovereignty is still one of the important features of modern sovereign state, meanwhile, the concept needs constant modifications in order to provide economic stability for the countries.

Բանալի բառեր- *արժութային ինքնիշխանություն, տնտեսական ինտեգրացիա, արժութային միություն, տնտեսական միություն, արժույթ թողարկելու իրավունք,, արժույթ գնահատելու իրավունք, արժույթ օգտագործելու իրավունք*
Ключевые слова: *валютный суверенитет, экономическая интеграция, валютный союз, экономический союз, право эмиссии валюты, право оценки валюты, право использовать валюту*
Key words:*monetary sovereignty, economic integration, monetary union, economic union, right to issue currency, right ofvaluation of curency, right to use currency*